Ցաւուրս Մէլէկի վէզիրիս չարացեալ խարաչճի ոմն, որոյ անունն Տէլի Պրատէր, և կալեալ զերիցունս Հայոց և Ցունաց զի խարամ առցէ, առեալ հրաման ի վէզիրէն։ Եւ երիցունք երթային և գային առ վէզիրն թէ Զէ օրէն և չէ լեալ և ոչ լիցի յաւուրս քո։ Եւ նա զկամս այնոցիկ հաճէր, որ ի ձեռս նոցայ էր ամենայն փառք թագաւորին։ Եւ ապայ մտան ի մուհտին և ոչ ետ ֆէթվայ տալ զհարկ և գնացեալ լացին առ Պէքտաշ աղան և նա ևս ոչ կամեցաւ զայն. և բազում իրիցանց առեալ էին բռնութեամբ զհարկն և զթուղթն տվեալ, Տէր Թորոսի Թորոս գրեալ և Տէր Կիրակոսի՝ Կիրակոս, զպապասն վերացուցեալ. Եւ յորժամ մուհտին Ոչ լինի ասաց և Պէքտաշ աղան ոչ կամեցաւ, հրաման առին զի զտվեալ ըստակն զամենայն յետ առին և զթուղթն յետ տվին։ Եւ Ցոյնք երդուան թէ Ընդ ձեզ եմք, միայն տեսցուք զբանս. որում սակի ԲՌ զուռուշ գնաց. և յետոյ Ցոյնք ուրացան զերդումն և Ա. ըստակ ոչ տվին։

Ցաւուրս վէզիրիս Մաղաքիայ Զէլէպի ոմն որդի մեծ իշխանին Երեմիայ Ամթեցւոյ յոյժ սիրելի վէզիրին՝ եկեալ ասա. և քաղաքացիքս զքիւրէքճոյ բաժինն ոչ կարէին հաւասարել ընդ եկեղեցիս, և լինէր աղմուկ ի մէջ նոցա, ասելով ընդ միմեանս թէ Զեր եկեղեցոյն սակաւ և իմն՝ շատ. վասն որոյ յարեցան առ Մաղաքիայ Զէլէպին, զի զիե քիւրէքճին վերացնել ետ ի Զ եկեղեցոյն և դադարեցան, որում Տէր Քրիստոս հատուսցէ փոխարէն ըստ իւրում բարեպաշտութեան և պահեսցէ զմիամօր որդին իւր՝ զԳասպար Զէլէպին պարագայց ամօք յիշատակ իւր և նախնեաց իւրոց, ամէն։

Բարթէնիոս անուն ոմն պատրիարք էր Ցունաց և